ARMENIA

Հայաստանի Ազգային Օլիմպիական Կոմիտե

# ԲՈՒԺՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐԳԵԼՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ

With the Support of

OLYMPIC SOLIDARITY

Երևան 2017

ISTUE

# Therapeutic Use Exemptions Guidelines

With the Support of

Translated
Prof. Areg Hovhannisyan
Edited &Published
David Gallery LLC
Saryan Str., 35, Yerevan 0002, Armenia

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


էջ

1.Ներածություն………………………………………………………………………… 4
2. ԲՆԱԴՕԹ ստանալու չափանիշեր……………………………………………… 5
3. Դիմելու գործընթացը………………………………………………………………. 6
4. Տեղեկությունների գաղտնիություն…………………………………………… 8
5. ԲՆԱԴՕԹ վավերացման ժամկետ……………………………………………… 9
6. ԲՆԱԴՕԹ –ի թարմացմումը…………………………………………………… 10
7. ԲՆԱԴՕԹ –ի հետադարձ ուժը…………………………………………………... 10
8. ԲՆԱԴՕԹ-ի ճանաչում………………………………………………………………… 11
9. ԲՆԱԴՕԹ-ի վերանայման եւ բողոքարկման գործընթացները………………. 13
10. ՀԿ ԲՕՀ պարտականությունները…………………………………………….. 15
11. ՀՀԳ-ի կոզմից ԲՆԱԴՕԹ Մոնիտորինգ………………………………………… 17
12. ԲՆԱԴՕԹ –ի ղեկավարումը ԱԴԱՄՄ-ի միջոցով…………………………….. 19
13. Հասկացություններ ………………………………………………………………….. 21
14. Հավելված 1. ԲՆԱԴՕԹ ատանալու հրահանգ……………………………………… 27
15.Գծագրեր…………………………………………………………………………………. 29
16. ԲՆԱԴՕԹ ատանալու Հայտաի Ձև……………………………………………….. 30
17. ԲՆԱԴՕԹ ատանալու Հայտ լրացներու նմուշ………………………………… 33

# 1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բուժման նպատակով արգելված նյութի օգտագործման թույլտվության Միջազգային Ստանդարտը (ԲՆԱԴՕԹ ՄՍ ), որը ստեղծվել է հասկանալու, որ արգելված նյութի կամ մեթոդի օգտագործումը պայմանավորված է հիվանդության կամ բժշկական վիճակով և մարզիկը կարող է այն պահանջել Համաշխարհային հակադոպինգային գործակալության (ՀՀԳ) Արգելված նյութերի ցուցակում ընգրկված դեղերի օգտագործման համար:
Արգելված նյութի կամ դրա մետաբոլիտների կամ մարկերների ներկայությունը մարզիկի նմուշում և/կամ դրա օգտագործումը կամ օգտագործման փորձը, արգելված նյութերին տիրապետումը կամ տիրապետման փորձը չպետք է դիտվի որպես հակադոպինգային կանոնների խախտում (*Անբարենպաստ այդունք*), եթե դա համահունչ է ներքոբերված դրույթներին և Բուժման նպատակով արգելված նյութի օգտագործման թույլտվությունը (*ԲՆԱԴՕԹ*) տրված է ըստ ԲՆԱԴՕԹ -ի Միջազգային ստանդարտի (Օրենսգրքի 4.4.1):
ԲՆԱԴՕԹ շնորհվում է մարզիկին սահմանված պայմաններում: ԲՆԱԴՕԹ-ի առկայությունը հնարավորություն է տալիս մարզիկին օգտագործել անհրաժեշտ դեղորայք և մասնակցել սպորտային միջոցառումներին, առանց որակազրկման վտանգի:
Մարզիկը պետք է ունենա լավ փաստագրված բժշկական վիճակ, ապահովված հուսալի, համապատասխան և բավարար բժշկական տվյալներով (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 6.2), որը ցույց է տալիս, որ նրան տրված է չափանիշներին համապատասխանող ԲՆԱԴՕԹ: Այս պարտադիր փաստաթղթերը աջակցում են մարզիկին ստանալ ԲՆԱԴՕԹ իր համապատասխան հակադոպինգային կազմակերպության (ՀԿ) կողմից:

**1.1 Օգտագործման ոլորտ**

Այս ԲՆԱԴՕԹ ստանալու ուղեցույցը նախատեսված է ՀԿ-ի միջոցով ԲՆԱԴՕԹ ստանալու չափանիշների և գործընթացի պարզաբանմանը:
Ուղեցույցում բերվում է ՀԿ-ի հիմնական պարտականությունները, այդ թվում մարզիկների կողմից ներկայացված ԲՆԱԴՕԹ հայտի քննությունը, ճանաչումը, և ԲՆԱԴՕԹ վերաբերյալ որոշումների կայացումը: Այս ուղեցույցը նախատեսում է տալ բացատրություններ և լրացուցիչ տեղեկատվություն՝ հիմնվելով Օրենսգրքի 4.4 կետին և Բուժման նպատակով արգելված նյութի օգտագործման թույլտվության Միջազգային Ստանդարտին, որոնցից յուրաքանչյուրի պահաջները պահպանելը պարտադիր է:

## 1.2 Հիշատակում

**1.2.1 Սահմանված Պայմաններ**

Այս ԲՆԱԴՕԹ-ի ուղեցույցը ներառում է Օրենսգրքով սահմանված պայմանները, ԲՆԱԴՕԹ միջազգային ստանդարտի (ԲՆԱԴՕԹ ՄՍ), Թեստավորման և հետաքննության միջազգային ստանդարտի (ԹՀՍ), Լաբորատորիաների համար միջազգային ստանդարտի և պաշտպանության գաղտնիության և անձնական տեղեկատվության միջազգային ստանդարտի (ՊԳԱՏ) հասկացողությունները:

**1.2.2 Փաստաթղթավորում**

Հետևյալ հղումները համարվում են ԲՆԱԴՕԹ միջազգային ստանդարտի հիմնական հղումներ, որոնք բոլորը հասանելի են ՀՀԳ-ի պաշտոնական կայքում.

- 2015 թ Համաշխարհային հակադոպինգային Օրենսգիրք
- Միջազգային Ստանդարտ բուժման նպատակով օգտագործման թույլտվություն

- Հարցեր և պատասխաններ բուժման նպատակով օգտագործման թույլտվության վերաբերյալ
- Բուժական նպատակով արգելված նյութերի օգտագործման համար արդյունքների Բժշկական Տեղեկատվություն հանձնաժողովների համար:
- Կառավարում, լսումներ և որոշումների ուղեցույցներ:

**1.2.3 ԲՆԱԴՕԹ ստանալու կարգը**

Ուղեցույցի վերջում բերված Գծագիրները ներկայացնում են Օրենսգրքի 4.4 կետում բերված ԲՆԱԴՕԹ ընթացակարգը և նախատեսված են հետևյալ անձերի համար.

1. Մարզիկների, որոնք չեն հանդիսանում միջազգային կարգի մարզիկներ:
2. Միջազգային մակարդակի մարզիկների:
3. Խոշոր միջազգային մրցումների կազմկոմիտեների (ԽՄՄԿ), իրենց սեփական պահանջներով:

# 2.0 ԲՆԱԴՕԹ ստանալու չափանիշներ

Մարզիկին կարող է տրվել ԲՆԱԴՕԹ, եթե (և միայն այն դեպքում) նա կարող է ցույց տալ, որ վերընշվածից յուրաքանչյուրը բավարարում է հետևյալ պայմաններին՝

ա. Արգելված նյութ կամ Արգելված մեթոդ անհրաժեշտ է օգտագործել սուր կամ քրոնիկ հիվանդությունը բուժելու համար և բժշկական պայմանը այնպիսին է, որ մարզիկին բուժելու համար պետք նշանակվի միայն արգելված նյութ, կամ արգելված մեթոդ (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 4.1ա):

բ. Արգելված նյութի, կամ Արգելված մեթոդի բուժական նպատակով օգտագործումը, որի օգտագործումը մարզիկի աշխատունակությունը բարձրացնելու համար խիստ անհավանական է, բայց որը կարող է այդ դեղի միանվագ կամ քրոնիկ օգտագործումից հետո վերադարձնել մարզիկին նորմալ առողջական վիճակ (ԲՆԱԴՕԹ ՄՍՏ հոդված 4.1,բ): Չնայած նրան, որ կարող են լինել մի քանի բացառություններ անհատական դեպքերում, և Արգելված նյութի, կամ Արգելված մեթոդի օգտագործումից հետո մարզիկի աշխատունակությունը կարող է բարձրանալ, այնուամենայնիվ, նման բուժումից հետո մարզիկի աշխատունակությունը չպետք է գերազանցի այն մակարդակը, որը գոյություն ուներ նախքան բուժումը:

գ. Չկա բուժման խելամիտ այլընտրանք արգելված նյութի կամ արգելված մեթոդ օգտագործմանը (ԲՆԱԴՕԹ ՄՍՏ Հոդված 4.1 (գ):

Ողջամիտ թերապևտիկ այլընտրանքների վերաբերյալ պետք է նշել երեք կետ:
Միայն արտոնագրված և գրանցված դեղեր պետք է կիռարվեն, որպես այլընտրանք դեղեր:
Տարբեր երկրների արտոնագրված և գրանցված դեղերը կարող են տարբերվել միմյանցից:
Այս տարբերությունները պետք է հաշվի առնել:

Կարող են լինել դեպքեր, երբ բժշկական տեսանկյունից նպատակահարմար չի օգտագործել այլընտրանքային դեղ: Այս դեպքերում, բժիշկը պետք է փաստի, թե ինչու նա չի փորձել օգտագործել այլընտրանքային դեղ, նախքան արգելված նյութի, կամ արգելված մեթոդի օգտագործումը:

Ողջամիտ թերապևտիկ այլընտրանքների վերաբերյալ պետք է նշել երեք կետ:

դ. Արգելված նյութի կամ արգելված մեթոդի օգտագործման անհրաժեշտությունը չի հանդիսանում ամբողջությամբ կամ մասնակիորեն, արգելված դեղի նախորդ օգտագործման /առանց ԲՆԱԴՕԹ/ շարունակությունը:

ՀՀԳ փաստաթղթերը «Բժշկական տեղեկատվություն ԲՆԱԴՕԹ որոշումներ կայացնելու համար» խորագրով կարող են օգնել բժիշկներին և ՀԿ-ներին կիրառելու այդ չափանիշները որոշակի բժշկական պայմաններում: Այս փաստաթղթերը հասանելի են ՀՀԳ-ի պաշտոնական կայքում:

## 3.0 Դիմելու գործընթացը

ԲՆԱԴՕԹ ստանալու համար պահանջվում է բոլոր բուժական գործողությունները, որոնք ներառում են արգելված նյութի կամ մեթոդի օգտագործումը:
Մարզիկը պետք է ձեռք բերի ԲՆԱԴՕԹ մինչև արգելված նյութի կամ մեթոդի օգտագործումը կամ տիրապետումը (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 4.2) բացառությունների ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 4.3-ում սահմանված դեպքերում և նաև ուղեցույցի Բաժին 7.0-ում:

### 3.1 ԲՆԱԴՕԹ ստանոլու հայտի ներկայացման վերջնաժամկետ

Մարզիկը, ով կարիք ունի ԲՆԱԴՕԹ ստանալու, պետք է որքան հնարավոր է շուտ ներկայացնի ՀԿ.

- **Միայն մրցումների ժամանակ արգելված նյութերի** օգտագործման դեպքում մարզիկը պետք է դիմի ՀԿ իր հաջորդ մրցումից առնվազն 30 օր առաջ, եթե այն արտակարգ կամ բացառիկ իրավիճակ չէ (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդվածներ 4.3 և 6.1): Եթե մարզիկը գիտի, որ նա պետք է օգտագործի արգելված նյութը երկարաժամկետ, ապա պետք է դիմի համապատասխան ՀԿ որքան հնարավոր է շուտ, նույնիսկ այն դեպքերում եթե այդ նյութը արգելված է միայն մրցումների ժամանակ:

- **Մշտապես արգելված նյութերի համար** ԲՆԱԴՕԹ դիմումը պետք է ներկայացվի այնպես արագ, որքան արագ մարզիկի առողջական վիճակի լավացումը
- պահանջում է արգելված նյութի, կամ արգելված միջոցների օգտագործումը: Եթե մարզիկի արգելված նյութի օգտագործման անհրաժեշտությունը ախտորոշվել է մինչև նրա հակադոպինգային կանոնների կիրառման սուբեկտ դառնալը, ապա նա պետք է ներկայացնի ԲՆԱԴՕԹ հայտը որքան հնարավոր է շուտ, բայց մինչև որ նա կդառնա հակադոպինգային կանոնների կիրառման սուբեկտ:

### 3.1.1 Ձևաչափ

ԲՆԱԴՕԹ հայտի բոլոր ձևերը գոյություն ունեն հայերեն և անգլերեն, առկա են Հայաստանի ՀԿ-ի կայքում, պատրաստ են ներբեռնման և օգտագործման համար:
Բոլոր հայտերի պատճենները պետք է ուղարկվեն ՀՀԳ (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 5.4):
ԲՆԱԴՕԹ հայտը ներկայացված է Միջազգային Ֆեդերացիայում /ՄՖ/ և բերված է գծանկարում: Մարզիկը պետք է օգտագործի իր ՀԿ, որը իր հերթին ՄՖ դիմելու ժամանակ պետք է օգտագործի և նշի իր լոգոն և կոնտակտային տվյալները՝ ապահովելով ձևը իրենց պաշտոնական կայքում, մարզիկների տվյալները ներբեռնման համար:
ԲՆԱԴՕԹ հայտերը կարող են ավելացվել լրացուցիչ տեղեկությունով, սակայն ոչ մի բաժին կամ տարր չեն կարող հանվել (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 6.1). Կարևոր է, որ բոլոր դիմումները ու տեղեկատվությունը ուղարկվեն ՀՀԳ:

### 3.1.2 Բժշկական տեղեկատվություն

Բոլոր համապատասխան բժշկական տեղեկատվությունը ԲՆԱԴՕԹ համար անհրաժեշտ է ներկայացնել հայերեն և անգլերեն:
Նշենք, որ անհրաժեշտ չէ թարգմանել բոլոր բժշկական փաստաթղթերը: Սակայն, ամփոփումը, որը բացատրում է ախտորոշումը և կլինիկական քննությունների հիմնական տարրերը, բժշկական թեստերը և բուժման պլանը թարգմանել պարտադիր է:

*Դիմումը Ներկայացնելու կարգը*

Մարզիկը պետք է ներկայացնի լրացրած ԲՆԱԴՕԹ ստանալու հայտը իր ազգային հակադոպինգային կազմակերպություն (ԱՀԿ), ՄՖ կամ ԽՄՄԿ՝ կիրառելով ԲՆԱԴՕԹ

ստանալու հայտի ձևը, որը հասանելի է ներբեռնման համար ԱՀԿ կայքում (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 6.1- րդ):
Մարզիկը ներկայացնում է իր ԲՆԱԴՕԹ ստանալու հայտը է ԱԴԱՄՍ-ի միջոցով ՀՀԳ, կամ թղթային ֆորմատով՝ օգտագործելով համապատասխան ԲՆԱԴՕԹ ստանալու հայտի ձևը: Վերջին դեպքում, ՀԿ-ը այդ տեղեկատվությունը գրանցում է ԱԴԱՄՍ-ում:

## 3.3 ԲՆԱԴՕԹ-ի Հաստատում

ԲՆԱԴՕԹ ստանալու հայտը քննվում է համապատասխան ՀԿ-ի ԲՆԱԴՕԹ հանձնաժողովի (ԲՆԱԴՕԹՀ) կողմից:
ԲՆԱԴՕԹՀ-ի որոշումները սովորաբար պետք է ձեռնարկվեն 21 օրվա ընթացքում, հայտը և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո, ինչի մասին պետք է գրավոր տեղեկացվի մարզիկին համապատասխան ՀԿ կողմից (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդվածների 6.7 և 6.8):

## 3.4 Բժշկական օգնության

ԲՆԱԴՕԹ-ը արդյունավետ է համապատասխան ՀԿ-ից թույլտվություն ստանալուց հետո: Մինչև համապատասխան ՀԿ-ի թույլտվություն ատանալը մարզիկները արգելված նյութ կարող են օգտագործել միայն իրենց սեփական ռիսկով:
Նման օգտագործումը հանդիսանում է հակադոպինգային կանոնների խախտում: Սակայն, երբ կա արտակարգ բժշկական իրավիճակ և մարզիկի առողջությանը վտանգ է սպառնում, ճիշտ կլինի, որ նա՝ չնայաց առկա ռիսկի, երբեք չհրաժարվի արգելված դեղը օգտագործելուց: Տես՝ ուղեցույցի 7.0 բաժինը:

## 3.5 Փաստաթղթավորման չափանիշները

ԲՆԱԴՕԹ հայտը համարվում է ընդունված, եթե այն ըստ ԲՆԱԴՕԹՀ-ի համապատասխանում է ԲՆԱԴՕԹ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏԻ սահմանված չափանիշներին:

Հետևյալ փաստաթղթերը կցվում են ԲՆԱԴՕԹ ստանալու լրացված հայտին.

- պատշաճ որակի բժշկական ախտորոշում, որը ապացուցում է, որ մարզիկը պետք է օգտագործի արգելված նյութ, կամ արգելված մեթոդ.

- համապարփակ բժշկական պատմությունը, այդ թվում, ախտորոշումը կատարած բժշկի (ների) կողմից և բոլոր բժշկական և լաբորատոր քննությունների արդյունքները (ԲՆԱԴՕԹ ՄՍ Հոդված 6.2 (բ):

Մարզիկները պետք է պահպանեն ԲՆԱԴՕԹ ստանալու հայտի ամբողջական պատճենները և բոլոր ներկայացված նյութերի և տեղեկատվության պատճենները:

***Թերի լրացված հայտեր***
ԲՆԱԴՕԹ ստանալու հայտը կուղարկվի ՀԿ-ի կողմից ԲՆԱԴՕԹՀ, եթե նա լրացված է պատշաճ կերպով և առկա են բոլոր համապատասխան փաստաթղթերը: Թերի լրացված հայտերը կվերադարձվեն մարզիկին կրկնակի ներկայացման համար (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 6.4- րդ):

*Լրացուցիչ տեղեկատվության համար հարցումներ*
ԲՆԱԴՕԹՀ կարող է պահանջել մարզիկից կամ իր բժշկից լրացուցիչ տեղեկություններ, քննություններ կամ ուսումնասիրություններ, կամ այլ տեղեկատվություն, և/կամ ներգրավել այլ բժշկական կամ գիտական փորձագետ (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 6.5):
Նմանապես, ՀՀԳ-ի ԲՆԱԴՕԹՀ կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և/կամ, այդ թվում, հետագա ուսումնասիրությունների, և/կամ ներգրավել այլ բժշկական կամ գիտական փորձագետներ հայտի վերանայման համար (ԲՆԱԴՕԹ ՄՍ Հոդվածներ 6.5 եւ 8.5): Տես՝ ուղեցույցի բաժինը 12.1:
Սակայն, պետք է նշել, որ ՀՀԳ-ի ԲՆԱԴՕԹՀ կարող է չեղյալ համարել ՀԿ-ի կողմից տրված ԲՆԱԴՕԹ-ի առանց լրացուցիչ տեղեկություններ պահանջելու, և մարզիկը պետք է նորից դիմի ԲՆԱԴՕԹ ստանալու համար համապատասխան ՀԿ-ին:

*Ծախսեր*
Մարզիկը պատասխանատու է վճարել ԲՆԱԴՕԹ ստանալու հետ կապված բոլոր ծախսերը (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 6.6):

## 4.0 Տեղեկությունների գաղտնիությունը

ԲՆԱԴՕԹ գործընթացին վերաբերվող բոլոր փաստաթղթերը պետք է հավաքվեն, պահպանվեն և վերամշակվեն «Անձնական տեղեկատվության պահպանման» ՀՀԳ ստանդարտի (ISPPPI) չափանիշներին համապատասխան (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 9.1):
Մարզիկը ԲՆԱԴՕԹ ստանալու համար պետք է ստորագրի գրավոր համաձայնություն հետևյալի մասին, որ՝

ա. ԲՆԱԴՕԹ վերաբերվող հայտին և ամբողջ տեղեկատվությանը լիազորված են ծանոթանալ ԲՆԱԴՕԹՀ բոլոր անդամները, ինչպես նաև եթե պահանջվում է, այլ անկախ բժշկական կամ գիտական փորձագետները, ներառյալ ՀՀԳ-ի աշխատակիցները, որոնք ներգրավված են ԲՆԱԴՕԹ-ի հայտի վերաբերյալ կառավարման, վերանայման կամ բողոքարկման գործընթացներում:

բ. ԲՆԱԴՕԹՀ-ի բոլոր անդամները կարող են ստանալ մարզիկի բժշկից (ներին) ԲՆԱԴՕԹՀ պահանջով, ինչը ԲՆԱԴՕԹՀ համարում է անհրաժեշտ, ցանկացած մարզիկի առողջական վիճակի մասին անհրաժեշտ տեղեկատվություն և մարզիկի դիմումի վերաբերյալ որոշումը:

գ. Մարզիկը պետք է ապահովի, որ ԲՆԱԴՕԹՀ-ի որոշումը հասանելի լինի բոլոր ՀԿ-երին, որոնք կապ ունեն մարզիկի թեստավորման և/կամ թեստավորման արդյունքների վերլուծության հետ:

դ. ԲՆԱԴՕԹՀ-ի գործընթացներին առնչվող տեղեկատվությունը պետք է պահպանվի և հասանելի լինի նաև ԱԴԱՄՍ-ում «Անձնական տեղեկատվության պահպաման» ՀՀԳ ստանդարտի (ISPPPI) չափանիշներին համապատասխան:

Նախքան մարզիկի անձնական տեղեկատվություն հավաքելը կամ նրա համաձայնությունը ձեռք բերելը ՀԿ-ն պետք է տեղեկացնի մարզիկին Անձնական տեղեկատվության պահպաման» ՀՀԳ ստանդարտի 7.1 հոդվածով սահմանված տեղեկությանը:
Մարզիկները, որոնք դիմում են ԲՆԱԴՕԹ ստանալու համար ԱԴԱՄՍ-ի միջոցով, պետք է ներկայացվեն վերը նշված համաձայնությունները ԱԴԱՄՍ-ում:

ԲՆԱԴՕԹ-ի հայտերը կառավարվում են խիստ բժշկական գաղտնիության սկզբունքների համաձայն: ԲՆԱԴՕԹՀ-ի անդամները, անկախ փորձագետները և համապատասխան ՀԿ անձնակազմը պետք է անցկացնեն բոլոր գործողությունները խիստ գաղտնի, և ստորագրեն համապատասխան գաղտնիության համաձայնագրեր:

ԲՆԱԴՕԹ-ի հայտը չեղյալ համարելու կամ նրա  քննարկման գործընթացի մասին տեղեկատվություն ստանալու համար մարզիկը կամ իր բժիշկը  իրավունք ունի իր անունից գրավոր դիմել ԲՆԱԴՕԹՀ կամ ՀԿ:

Մարզիկի կողմից ներկայացված տեղեկությունը պետք է օգտագործվի միայն ՀԿ-ում ԲՆԱԴՕԹ-ի հայտի վերլուծության նպատակով և պոտենցիալ անբարենպաստ արդյունքի հետաքննությունների համատեքստում:

## 5.0 ԲՆԱԴՕԹ վավերացման ժամկետ

ԲՆԱԴՕԹՀ նշումը է յուրաքանչյուր ԲՆԱԴՕԹ սկիզբի և ավարտի ամսաթիվը, որից հետո ԲՆԱԴՕԹ-ի վավերացման ժամկետը ավարտվում է ինքնաբերաբար: Եթե մարզիկը պետք է շարունակի օգտագործել արգելված նյութ կամ արգելված մեթոդ ԲՆԱԴՕԹ-ի վավերացման ժամկետի ավարտից հետո, նա պետք է դիմի նոր ԲՆԱԴՕԹ ստանալու համար ինչը պետք է անել  նախապես, որպեսզի լինի բավարար ժամանակ որոշումը կայացնելու համար մինչև գործող ԲՆԱԴՕԹ վավերացման ժամկետի ավարտը (ԲՆԱԴՕԹ ՄՍ  հոդված 6.9):

ԲՆԱԴՕԹ վավերացման ժամկետի մասին տևողություն ստանալու համար կարելի է ուսումնասիրել ՀՀԳ փաստաթուղթը «Բժշկական Տեղեկատվություն ԲՆԱԴՕԹՀ որոշումների համար» վերնագրված:

ԲՆԱԴՕԹ կհանվի մինչև վավերացման ժամկետի ավարտը եթե մարզիկը չկատարի համապատասխան ԲՆԱԴՕԹ տրամադրող ՀԿ-ի պահանջները: Այլապես, ԲՆԱԴՕԹ կարող է չեղյալ համարվել  ՀՀԳ կոզմից  կամ ՀԿ-ը բողոքարկման (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 6.10):

ԽՄՄԿ-ի կողմից տրված  ԲՆԱԴՕԹ-ը ուժի մեջ է միայն մրցումների ժամանակ: Եթե  մարզիկը պետք է շարունակի օգտագործել  արգելված նյութ կամ արգելված մեթոդ մրցումներից հետո, նա պետք է դիմի  իր ՀԿ նոր ԲՆԱԴՕԹ ստանալու համար, եթե նա հանդես է գալիս ցածր ազգային մակարդակով, և ազգային ՀԿ թույլ է տալիս օգտագործել ուժ կորցրած միջազգային կարգի ԲՆԱԴՕԹ-ներ (ԲՆԱԴՕԹ ՄUS  հոդված 4.3):

### 5.1 Քրոնիկ բուժման պայմանները

ԲՆԱԴՕԹ ստանուլու համար, անկախ նրանից հանդիսանում է արգելված նյութի կամ արգելված մեթոդի օգտագործումը միանվագ կամ քրոնիկ, Հայտում պետք է նշվի արգելված նյութի կամ արգելված մեթոդի կոնկրետ դոզան, օգտագործման հաճախականությունը, մեթոդը, եղանակը և տևողությունը: Երբ պոտենցիալ քրոնիկ առողջական վիճակը ախտորոշվել է արաջին անգամ, ցանկալի է ներկայացնել Հայտ ԲՆԱԴՕԹ ատանալու համար   կարճ ժամանակահատվածում, մինչև բուժման ռեժիմը կկայունանա: Որոշակի դեպքերում  կարելի օգտագործել այդ հիվանդության բուժման համար օգտագործվող դեղի հստակ սահմանված դեղաչափը և հաճախականությունը:

Որոշ քրոնիկ հիվանդությունների դեպքում, ԲՆԱԴՕԹ կարող է տրամադրվել երկար ժամանակահատվածի համար: Տես՝ «Բժշկական Տեղեկատվություն ԲՆԱԴՕԹՀ որոշումներ կայացնելու համար ԲՕՀ» (Բժշկի համար ուղեցույցներ):

Այնուամենայնիվ, անկախ ԲՆԱԴՕԹ-ի պահանջներին, դեղի օգտագործումը պետք է պարբերաբար վերահսկվի բժշկի կողմից, ըստ պատշաճ բժշկական պրակտիկայի:

### 5.2 Փոփոխություններ ԲՆԱԴՕԹ-ում

Համաձայն ԲՆԱԴՕԹ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏԻ հոդված 6.12-րդ, եթե մարզիկի բուժման համար հետագայում պահանջվում է փոխել արգելված նյութի կամ արգելված մեթոդի դեղաչափը, հաճախականությունը, օգտագործման եղանակը, կամ տևողությունը, որ նշված է ԲՆԱԴՕԹ-ում, նա պետք է դիմի ՀԿ նոր ԲՆԱԴՕԹ ստանալու համար:
Եթե արգելված նյութի կամ արգելված մեթոդի օգտագործումը անհամատեղելի է մարզիկի շնորհված ԲՆԱԴՕԹ-ի պայմանների հետ, ապա այն փաստը, որ մարզիկը ունի ԲՆԱԴՕԹ, չի կարող կանխել անբարենպաստ այդունքի փաստը:

## 6.0 ԲՆԱԴՕԹ –ի թարմացումը

### 6.1 Նորացման պահանջները

ԲՆԱԴՕԹ-ը չի կարող երկարաձգվել առանց նոր բժշկական քննության և հաստատման: Մարզիկը պետք է լրացնի իր բժշկի կողմից ստորագրված նոր հայտ, մինչև նախորդ ԲՆԱԴՕԹ-ի ժամկետի լրանալը:

### 6.2 Թարմացում ԱԴԱՄՍ-ի միջոցով

ԱԴԱՄՍ-ը հեշտացնում է ԲՆԱԴՕԹ նորացման կարգը՝ տրամադրելով համակարգչային ձև, որի մի մասը արդեն լրացված է:
Մարզիկը ներկայացնում է նորացված բժշկական փաստաթղթեր, հետևելով ԲՆԱԴՕԹ –ի ստանդարտին: Հայտադիմումը պետք է ավարտվի, ստորագրվի բժշկի և մարզիկի կողմից և պետք է նշվի արդյոք այդ Հայտը հանդիսանում է մարզիկի նոր ԲՆԱԴՕԹ-ի դիմում թե հայտը ներկայացվում է նախկին ԲՆԱԴՕԹ-ի երկարաձգման համար:

### 6.3 Ոչ Ավտոմատ թարմացում

ԲՆԱԴՕԹ –ի ավտոմատ երկարացում չի թույլատրվում որև է պարագայում: Բժիշկը պետք է նորից հետազոտի մարզիկին և որոշի, եթե իր առողջական վիճակը փոխվել է և անցկացնի խելամիտ և պարտադիր բուժում, որը լիազորված է գործող ԲՆԱԴՕԹ-ով:

## 7.0 ԲՆԱԴՕԹ –ի հետադարձ ուժը

Կան իրավիճակներ, որոնց համար ԲՆԱԴՕԹ կարող է տրվել հետադարձ ուժով:
Տվյալ իրավիճակների գնահատման գործընթացը նույնն է ինչպես ԲՆԱԴՕԹ միջազգային ստանդարտում: Համապատասխան ԲՆԱԴՕԹՀ ուսումնասիրում է հայտը և իրականացնում իր որոշումը:
ԲՆԱԴՕԹ ՄՍ-ի հոդված 4.3-ում շարադրված հետևյալ իրավիճակները կարող են հանգեցնել հետադարձ ԲՆԱԴՕԹ-ի:

ա. Շտապ բուժ․օգնությունը ցուցաբերելուց կամ արողջական վիճակի կտրուկ վատացման դեպքում, կամ

բ. բացառիկ հանգամանքներում,երբ մարզիկը չունի բավարար ժամանակ կամ հնարավորություն չունի հայտ ներկայացնելու համար ինչպես նաև ԲՆԱԴՕԹՀ, որպեսզի քննարկել հայտը մինչև նմուշառումը, կամ

գ. կիրառվող կանոնները պահանջում կամ թույլատրում են մարզիկին դիմելու հետադարձ ԲՆԱԴՕԹ ստանալու համար:
Այդ մարզիկներից խորհուրդ է տրվում ունենալ բոլոր բժշկական փաստաթղթեր, որոնք պարտադիր պետք է ներկայցվեն նմուշառումից հետո:

դ. ՀՀԳ-ն և ՀԿ-ն, ուր ներկայացվել է հայտը, տվել են համաձայնություն, որ արդարության սկզբունքը պահանջում է հետադարձ ԲՆԱԴՕԹ տրամադրումը:

### 7.1 Պարզաբանում ԲՆԱԴՕԹ հետադարձ ուժի վերաբերյալ

ա. Բժշկական շտապ օգնության իրավիճակը տեղի է ունենում այն ժամանակ երբ մարզիկի առողջական վիճակը արդարացնում է արգելված նյութի կամ մեթոդի անհետաձգելի կիրառումը և անհապաղ բուժման ձախողումը կարող է զգալիորեն վնասել մարզիկի առողջությանը: Պետք է հաշվի առնել, որ միշտ նախընտրելի է ստանալ ԲՆԱԴՕԹ նմուշառումից առաջ, քան հետադարձ ամսաթվով: ՀԿ-ները պետք է մշակեն ներքին ընթացակարգ, որը հնարավորություն կտա խուսափել մարզիկի առողջությունը վտանգի տակ դնել:

բ. Բացառիկ հանգամանքները տեղի են ունենում, երբ ԲՆԱԴՕԹ հայտը չի կարող տրամադրվել ժամանակին ոչ մարզիկի մեղքով: Հետևյալ օրինակները կարելի է համարել «բացառիկ հանգամանքներ»:

գ. Առողջ մարզիկ, որը հանկարծ հիվանդանում է մրցումներից մեկ-երկու օր առաջ և ի վիճակի չէ դիմել ՀԿ ԲՆԱԴՕԹ ստանալու համար իսկ/կամ Հանձնաժողովը չունի ժամանակ հայտը քննարկելու համար:

դ. Մի երիտասարդ մարզիկ, ով ունի քրոնիկ հիվանդություն և ում մարզական մակարդակը չի պահանջում ունենալ ԲՆԱԴՕԹ և նրա հակադոպինգային կրթությունը սահմանափակ է, հանկարծ ընդգրկվում է ազգային հավաքական:

## 8. ԲՆԱԴՕԹ-ի ճանաչում

Այս բաժինը անդրադառնում ՀԿ ԲՆԱԴՕԹ ճանաչելու լիազորությանը, երբ ԲՆԱԴՕԹ տրանադրված է այլ ՀԿ-ի կողմից , ինչպես պահանջվում է Օրենսգրքի 4.4 հոդվածում: Տես՝ գծանկարները:

### 8.1 ԲՆԱԴՕԹ տրամադրելու իրավունքը

ԲՆԱԴՕԹ տրամադրելու իրավունքը հիմնված է մարզիկի մրցակցության մակարդակով:

#### 8.1.1 Ազգային ՀԿ-ներ

Մարզիկը, ով չի հանդիսանում միջազգային մակարդակի մարզիկ պետք է դիմի իր ՀԿ-ին ԲՆԱԴՕԹ ստանակու համար (Օրենսգրքի 4.4.2):
Երբ ՀԿ մարզիկին տրամադրում է ԲՆԱԴՕԹ , ՀԿ պետք է զգուշացնի նրան, որ՝

ա. ԲՆԱԴՕԹ ուժի մեջ է միայն ազգային մակարդակով, և

բ. Եթե մարզիկը դառնում է միջազգային մակարդակի մարզիկ կամ մասնակցում է միջազգային մրցումներին, տրված ԲՆԱԴՕԹ կլինի անվավեր այդ մրցումներին, եթե այն չի ճանաչվել համապատասխան ՄՖ կամ ԽՄՄԿ, ըստ ԲՆԱԴՕԹ ՄՍ 7.1 հոդվածի:

գ. Այնուհետև ՀԿ պետք է օգնի մարզիկին որոշել, թե երբ նա պետք է ներկայացնի իր ԲՆԱԴՕԹ-ի հայտը ՄՖ-ին կամ ԽՄՄԿ ճանաչման համար, և աջակցել դիմելու գործընթացում:

դ. Եթե ազգային ՀԿ ժխտում է ԲՆԱԴՕԹ հայտը, ապա մարզիկը կարող է դիմել բացառապես ազգային մակարդակի բողոքարկման մարմնին ինչպես նկարագրված է Օրենսգրքի 13.2.2 և 13.2.3 (Օրենսգրքի 4.4.2) հոդվածներում:

Եթե ազգային քաղաքականության պահանջները հանգեցնել նրան որ ՀԿ իր թեստավորման ծրագրում առաջնահերթ է համարում միայն որոշակի մարզաձևեր ապա ՀԿ կարող չքննարկել թեստավորման ծրագրում չընգրկված մարզիկի Հայտը հաշվի առնելով, որ այդ մարզիկը երբեք չի ենթարկվի նմուշառման:

### 8.1.2 ՄՖ և ԽՄՄԿ

Միջազգային կարգի Մարզիկը պետք է ներկայցնի իր ԲՆԱԴՕԹ ստանալու հայտը իր ՄՖ-ին (Օրենսգրքի 4.4.3):
Մարզիկը կարող է դիմել ԽՄՄԿ ԲՆԱԴՕԹ ստանալու պահանջով, եթե նա ցանկանում է օգտագործել է արգելված նյութ, կամ մեթոդ միջազգային մրցումների ժամանակ (Օրենսգրքի 4.4.4):

- ԽՄՄԿ ապահովում է պայմաններ, որ մարզիկը դիմի ԲՆԱԴՕԹ ստանալու համար, եթե նա դեռ չունի ԲՆԱԴՕԹ.
- ԽՄՄԿ-ի շնորհված ԲՆԱԴՕԹ գործում է միան մրցումների ժամանակաշրջանում (օրենսգրքի 4.4.4.1).
- Համաձայն ԲՆԱԴՕԹ-ի ՄՍ Հոդված 5.6, յուրաքանչյուր ՄՖ և ԽՄՄԿ պետք է հրապարակի ծանուցում իր պաշտոնական կայքում, ինչպես նաև ուղարկի այն ՀՀԳ-ը, որում պետք է հստակ նշվի հետևյալը.

1. Այն մարզիկները, որոնք գտնվում են դրա իրավասության տակ պետք է դիմեն ԲՆԱԴՕԹ ստանալու համար:

2. ԲՆԱԴՕԹ-ի վերաբերյալ ՀԿ-երի այլ որոշումների համար պահանջվում է լրացուցիչ ճանաչում ըստ ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդվածի 7.1-րդ (բ): ՀՀԳ կարող վերահրատարակել վերոնշված տեղեկությունը իր պաշտոնական կայքում:

ՄՖ կարող է ներկայացնել ԲՆԱԴՕԹ –ը՝ օգտագործելով ԱԴԱՄՍ-ը, որը կլինի հասանելի ՀՀԳ-ին և մարզիկի ազգային ՀԿ-ին:

### 8.1.3 Մարզիկի մրցակցության մակարդակի փոփոխություն

Եթե մարզիկի մրցակցության մակարդակը փոփոխվում է, օրինակ՝ նա պետք է ստանա ԲՆԱԴՕԹ –ը իր ՄՖ-ից կամ ԽՄՄԿ-ից , այլ ոչ թե դիմի նոր ԲՆԱԴՕԹ ստանալու համար: Մարզիկը կարող է խնդրել ՄՖ-ին կամ ԽՄՄԿ է ճանաչել իր իսկ արդեն գոյություն ունեցող ԲՆԱԴՕԹ-ը եթե ՄՖ-ին կամ ԽՄՄԿ հայտարարել է, որ դա կլինի ինքնաբերաբար առանց լրացուչիչ ճանաչման անհրաժեշտության:

### 8.2 ԲՆԱԴՕԹ-ի ճանաչումը

Օրենսգրքի 4.4 հոդվածը պահանջում է ՀԿ ճանաչել այլ ՀԿ-ների կողմից տրված ԲՆԱԴՕԹ-ները եթե դրանք բավարարում են ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 4.1 պայմաններին: Այնուամենայնիվ համապատասխան ՀԿ-ը կարող է վերլուծել տրված ԲՆԱԴՕԹ, որպեսզի համոզվի, որ այն համապատասխանում է ԲՆԱԴՕԹ ՄՍ-ի պահանջներին.

- մարզիկի ազգային ՀԿ-ն կողմից տրված ԲՆԱԴՕԹ պետք է հաստատվի մարզիկի ՄՖ-ի կողմից (Օրենսգրքի 4.4.3.1հոդված).
- մարզիկի ազգային ՀԿ-ի կամ ՄՖ-ի կողմից տրված ԲՆԱԴՕԹ, որը համապատասխանում է ԲՆԱԴՕԹ ՄՍ պահանջներին պետք է հաստատվի ԽՄՄԿ կողմից (Օրենսգրքի 4.4.4.2 հոդված).

ՄՖ-ն կամ ԽՄՄԿ կարող է հրապարակել, որ ԲՆԱԴՕԹ-ի վերաբերյալ որոշումները կարող է ավտոմատ կերպով ճանաչի համաձայն օրենսգրքի 4.4 (կամ նման որոշումների որոշ կետերը, որոնք իրականացրել են նշված ՀԿ-երը կամ որոնք վերաբերվում են որոշակի արգելված նյութերին), այն պայմանով, որ այդպիսի ԲՆԱԴՕԹ որոշումները իրականացվել են ըստ ԲՆԱԴՕԹ ՄՍ պահանջներին , համաձայն 5.4 հոդվածի և, հետևաբար, հասանելի են ՀՀԳ վերանայման: Եթե մարզիկի ԲՆԱԴՕԹ դասվում է այն ԲՆԱԴՕԹ-ների շարքին, որոնք ավտոմատ կերպով ճանաչվում են, ապա մարզիկը կարիք չունի կատարել որև է այլ գործողություն:
Եթե ոչ, ապա նա պետք է ներկայացնի ԲՆԱԴՕԹ ստանալու հայտ, համաձայն ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդվածի 7.1-րդ (բ).

Մարզիկների բեռը մեղմելու նպատակով ՀՀԳ-ն խրախուսում է ԲՆԱԴՕԹ-ի ավտոմատ ճանաչումը:
Եթե ԽՄՄԿ չի ցանկանում շնորհել բոլոր նման որոշումների ավտոմատ ճանաչմանը, ապա նա պետք է շնորհի ավտոմատ ճանաչում, ինչքան հնարավոր է, շատ նման որոշումների, օրինակ՝ հրապարակելով ցուցակը ՀԿ, որի ԲՆԱԴՕԹ որոշումները, կճանաչվեն ինքնաբերաբար, և/կամ այն արգելված նյութերի ցանկը, որոնց համար տրված ԲՆԱԴՕԹ-ները կճանաչվեն ավտոմատ կերպով: Հրապարակումը պետք է լինի նույն ձևով, ինչպես սահմանված է ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդվածով 5.3-ով, այսինքն ծանուցումը պետք է տեղադրված լինի պաշտոնական կայքում, ուղարկվի ՀՀԳ եւ ՀԿ:

ԲՆԱԴՕԹ որոշումների ավտոմատ ճանաչումը խրախուսելու համար, ՀԿ-ի ԲՆԱԴՕԹ որոշումների հետ կապված գործընթացները պետք է լինեն թափանցիկ, խիստ և որակյալ:

## 9.0 ԲՆԱԴՕԹ-ի վերանայման և բողոքարկման գործընթացները

Օրենսգրքի 4.4 հոդվածը ներկայացնում է ԲՆԱԴՕԹ վերանայման և բողոքարկման հետ կապված պարտականությունները: (Տես՝ ուղեցույցի Հավելված 1 ներկայացված գործընթացները):
Եթե ՄՖ-ն հրաժարվում է ճանաչել ՀԿ-ի տրված ԲՆԱԴՕԹ-ը, քանի որ համարում է, որ ԲՆԱԴՕԹ չի համապատասխանում ԲՆԱԴՕԹ ՄՍ չափանիշներին, ապա Մֆ-ն ԲՆԱԴՕԹ անհապաղ պետք է ծանուցի մարզիկին և այդ ՀԿ-ին, բացատրելով պատճառները:
Այդպիսի ծանուցում ստանալուց հետո մարզիկը կամ ՀԿ պետք է ունենան 21 օր որպեսզի ուղարկեն բողոքը ՀՀԳ վերանայման:
ՀԿ-ի շնորհված ԲՆԱԴՕԹ-ը ուժի մեջ է մտնում ազգային մակարդակի մրցումների և արտամրցումային թեստավորման ժամանակ (բայց անվավեր է համարվում միջազգային մակարդակի մրցումներում) մինչև ՀՀԳ-ի որոշումը:

Եթե հայտը չի ուղարկվել ՀՀԳ վերանայման, ապա ԲՆԱԴՕԹ դառնում անվավեր երբ 21-օրյա վերանայման վերջնաժամկետը լրանում է:
Եթե մարզիկը չունի ՀԿ-ի կողմից տրամադրված ԲՆԱԴՕԹ, ապա մարզիկը պետք է անհապաղ դիմի ԲՆԱԴՕԹ ստանալու համար իր ՄՖ:

Եթե ՄՖ համաձայնվել է քննարկել մարզիկի ԲՆԱԴՕԹ ստանալու հայտը բայց մերժում է մարզիկին թույլտվություն տալու հարցում, ապա ՄՖ պետք է արագ տեղեկացնի մարզիկին իր որոշման մասին:
Եթե ՄՖ տալիս է մարզիկին ԲՆԱԴՕԹ, ապա ՄՖ պետք է շտապ տեղեկացնի մարզիկին և նրա ազգային ՀԿ-ին իր որոշման մասին:
Եթե ազգային ՀԿ-ն համաձայն չէ ՄՖ-ի որոշման հետ, նա ունի 21 օր այդ որոշումը ՀՀԳ-ում բողոքարկելու համար:
Եթե ՀԿ-ը ուղարկում է ՄՖ-ի որոշումը ՀՀԳ բողոքարկելու համար, ՄՖ-ի որոշումը մնում է ուժի մեջ Միջազգային մրցումների և արտամրցումային թեստավորման ժամանակ մինչև ՀԿ-ը կստանա ՀՀԳ-ի որոշումը:
Եթե ՀԿ-ը չի ուղարկում ՄՖ-ի որոշումը ՀՀԳ բողոքարկելու համար, ՄՖ-ի որոշումը մնում է ուժի մեջ նաև ազգային մրցումների ժամանակ միչև 21 օր ժամանակահաղվածում:

Ուշադրություն դարձրեք, որ եթե ՄՖ ընտրում է ազգային մակարդակի մարզիկի թեստավորման համար, ապա ՄՖ պետք է ճանաչի այդ մարզիկի ՀԿ-ի կողմից տրված ԲՆԱԴՕԹ:

Եթե ԽՄՄԿ որոշում է, որ ՀԿ-ի կամ ՄՖ-ի կողմից տրված ԲՆԱԴՕԹ չի համապատասխանում ԲՆԱԴՕԹ ՄՍ չափանիշներին և հրաժարվում է ճանաչել այդ ԲՆԱԴՕԹ-ը, ապա ԽՄՄԿ պետք է անհապաղ տեղեկացնի մարզիկին այդ մասին և բացադրի պատճառները, իսկ մարզիկը կարող է բողոքարկվել անկախ մարմին որը ԽՄՄԿ պետք է սահմանի կամ նշանակի այդ նպատակի համար:
Եթե մարզիկը չի բողոքարկում ԽՄՄԿ որոշումը նա չի կարող օգտագործել է ԲՆԱԴՕԹ-ի հայտում նշված նույթը կամ մեթոդը, սակայն եթե մարզիկը ունի Հկ-ի կամ Մֆ-ի է ԲՆԱԴՕԹ նա կարող է օգտագործել ԲՆԱԴՕԹ-ում նշված նույթը կամ մեթոդը արտամրցումային ժամանակահաղվածում:
Եթե ՄՖ որոշում է մերժել ԲՆԱԴՕԹ-ի հաստատումը, իսկ մարզիկը չի բողոքարկել ՀՀԳ կամ նրա բողոքը դեռ ուսումնասիրվում է ՀՀԳ-ում, բայց ՄՖ-ի որոշումը չի վերանայվել, ապա մարզիկը և/կամ մարզիկի ՀԿ կարող է բողոքարկվել ՄՖ-ի որոշումը բացառապես մարզական արբիտրաժային դատարանում (ՄԱԴ):
Եթե ՀԿ հրաժարվում է ճանաչել այլ ՀԿ կողմից տրամադրված ԲՆԱԴՕԹ միայն այն պատճառով, որ բժշկական փաստաթղթերը կամ այլ տեղեկատվությունը, որոնք անհրաժեշտ են որ ապացուցեն ԲՆԱԴՕԹ ՄՍ չափանիշներին համապատասխանությունը բացակայում են, ապա այդ ստեղծված իրավիճակի մասին պետք չէ տեղեկացնել ՀՀԳ-ին: Փոխարենը, ԲՆԱԴՕԹ տրամադրող ՀԿ-ն պետք է լրացնի պակաս փաստաթղթերը կամ տեղեկատվությունը և կրկին ներկայացվի համապատասխան ՀԿ:

## 10.0 ՀԿ ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովի պարտականությունները

ՀԿ պետք է ստեղծի գործընթաց ԲՆԱԴՕԹ վերանայել: ՀԿ-ները կարող են ունենալ մշտական ԲՆԱԴՕԹ Հանձնաժողով կամ արագորեն հիմնել Հանձնաժողով յուրաքանչյուր առանձին դեպքում, կախված ԲՆԱԴՕԹ-ի փորձաքննության հետ:

Թեև ԽՄՄԿ կարող է ավտոմատ ճանաչել առկա ԲՆԱԴՕԹ-ը, ՀԿ-ները պետք է ունենան մեխանիզմ խոշոր միջազգային մրցումներին մասնակցող մարզիկների համար, ինչը թույլ կտա նրանց ձեռք բերել նոր ԲՆԱԴՕԹ, եթե անհրաժեշտություն է առաջանում:
Յուրաքանչյուր ԽՄՄԿ կամ սահմանում է իր սեփական ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովը, կամ այդ նպատակի համար տալիս է առաջադրանքը երրորդ կողմին (ինչպես, օրինակ՝ Սպորտ Ակորդ կազմակերպությանը): Յուրաքանչյուր դեպքում նպատակն է ապահովել, որ խոշար միջազգային մրցումներին մասնակցող մարզիկները կարողանան արագ ձեռք բերել ԲՆԱԴՕԹ նախքան մրցումները սկսվելը(ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 5.2- րդ):
ԲՆԱԴՕԹ Հանձնաժողով անհապաղ գնահատում է ԲՆԱԴՕԹ դիմումը և ընդունում իր որոշումը, որը համարվում է վերջնական որոշում: ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովը կարող է դիմել բժշկական կամ գիտական փորձաքննության եթե անհրաժեշտ է համարում ավելի լավ ուսումնասիրել որն է ԲՆԱԴՕԹ-ի հայտ:
Յուրաքանչյուր ՀԿ, և ԽՄՄԿ ունի ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովի հետ կապված հետևյալ պարտականությունները:

-Սահմանել բժիշկների ցանց, որոնք պատասխանատու են ԲՆԱԴՕԹ-ի Հայտերը գնահատելու համար: ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովը պետք է ներառի առնվազն երեք բժիշկներ, ովքեր ունեն մարզիկների բուժման փորձ և գիտելիքների կլինիկական և մարզական դեղաբանության ոլորտում (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 5.2 -րդ): ԲՆԱԴՕԹ Հանձնաժողի անդամ բժիշկներից մեկը հանդես է գալիս որպես Նախագահ:

Այն դեպքերում, երբ խոսքը գնում է հաշմանդամ մարզիկների մասին, ԲՆԱԴՕԹ Հանձնաժողի առնվազն մեկ անդամը պետք է ունենա հաշմանդամ մարզիկների խնամքի և բուժման փորձ: (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 5.2 (ա):

- Սահմանել ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովին դիմելու հստակ գործընթաց ԲՆԱԴՕԹ, որը համապատասխանում է ԲՆԱԴՕԹ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏԻ պահանջներին: ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովը նաև պետք է հրապարակի իրեն դիմելու գործընթացի

- մանրամասները իր պաշտոնական կայքում և ուղարկել այն ՀՀԳ իր պաշտոնական կայքի միջոցով (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 5.3- րդ):

- Անհապաղ ուղարկել (անգլերեն) այլ ՀԿ ԲՆԱԴՕԹ որոշումների վերաբերյալ իր ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովի բոլոր որոշումները ԲՆԱԴՕԹ տալու կամ Հայտը մերժելու մասին ԱԴԱՄՄ կամ որն է այլ ՀՀԳ կողմից հաստատված համակարգի միջոցով: Ինչ վերաբերվում է տրված ԲՆԱԴՕԹ, այդ տեղեկատվությունը պետք է ներառվի հայերեն և անգլերեն:

ա. Ոչ միայն տեղեկություն թույլատրված նյութի կամ մեթոդի մասին, այլ նաև նրանց դեղաչափը(երը), հաճախականությունը և օգտագործման եղանակը ԲՆԱԴՕԹ-ի վավերացման ժամկետը և ԲՆԱԴՕԹ-ի հետ կապված ցանկացած այլ տեղեկություն: (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 5.4 (ա), և
բ. ԲՆԱԴՕԹ հայտի ձևը և շարադրանքը համապատասխան կլինիկական տեղեկությունների (թարգմանված անգլերեն), պետք է բավարարի ԲՆԱԴՕԹ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏԻ Հոդված 4.1 պայմաններին, հասկանալի և հասանելի լինի ՀՀԳ-ին, մարզիկի ՀԿ-ին և ԽՄՄԿ-ին, եթե մարզիկը մասնակցում է խոշոր միջազգային մրցումների (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 5.4 (բ):

ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովի Գործընթացների ճանաչմանը մեծապես նպաստում է ԱԴԱՄՍ օգտագործումը:

### 10.1.1 Շահերի բախում և գաղտնիություն

Որոշումների անկախության որոշակի մակարդակը ապահովելու համար ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովի անդամները չպետք է ունենան որև է քաղաքական պատասխանատվություն իրենց ՀԿ-երում և բոլորը պետք է ստորագրեն շահերի բախման և գաղտնիության հռչակագիրը (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդվածի 5.2 -րդ (բ): ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովի ցանկացած անդամ, ով կարող է ունենալ շահերի բախում ՀԿ-ի կամ ՄՖ-ի հետ, պետք է հեռացվի ԲՆԱԴՕԹ հայտի քննարկման գործընթացից:
ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովի անդամների ստորագրության համար պատրաստ հռչակագրի ձևը հասանելի է ՀՀԳ-ի պաշտոնական կայքում:

### 10.2 21-օրվա որոշումների վերջնաժամկետը

ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովի որոշումը,որով պետք է շնորհել ԲՆԱԴՕԹ, սովորաբար պետք է ընդունվի որքան հնարավոր է արագ, (այսինքն, եթե բացառիկ հանգամանքներ չկան) ԲՆԱԴՕԹ Հայտը ստանալուց հետո ոչ ավելի, քան 21 օրվա ընթացքում: Այն դեպքերում, երբ ԲՆԱԴՕԹ Հայտի ներկայացումը կատարվում է ողջամիտ ժամկետում, նախքան մրցումների սկիզբը, ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովը պետք է օգտագործի իր բոլոր ջանքերը իր որոշումը ընդունելու համար մինչև մրցումների մեկնարկը (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 6.7-րդ):
ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովի գրավոր որոշումը պետք է ուղարկվի մարզիկին և հասանելի լինի ՀՀԳ-ին և այլ ՀԿ-ներին ԱԴԱՄՍ-ի միջոցով կամ որև է այլ ՀՀԳ-ի կողմից հաստատված համակարգի համաձայն ԲՆԱԴՕԹ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏԻ 5.4 -րդ հոդվածի (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 6.8- րդ):

ա. ԲՆԱԴՕԹ-ի վերաբերյալ որոշում պետք է նշվի օգտագործվող արգելված նյութի կամ արգելված մեթոդի դեղաչափը(երը), հաճախականությունը, օգտագործման եղանակը և տևողությունը, ինչը կապացուցի որ ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովը տվել է իր թույլտվությունը, ելնելով կլինիկական հանգամանքներից և իրավիճակից, որոնք կապված են ԲՆԱԴՕԹ-ի հետ:

բ. Եթե ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովը որոշում է մերժել ԲՆԱԴՕԹ հայտը, ապա այդ որոշումը պետք է ներառի մերժման պատճառը (ները):

### 10.2.1 Վերջնաժամկետի չպահպանումը

Մարզիկը, ով չի ստացել պատասխան իր ԲՆԱԴՕԹ հայտը ներկայցնելուց հետո, 21-օրյա ժամկետում, կամ մինչև մրցումների մեկնարկը պետք է դիմի ՀԿ-ին, որպեսզի ՀԿ-ն հաստատի իր ԲՆԱԴՕԹ հայտի կարգավիճակը:
ՀԿ-ը պարտավոր է ողջամիտ ժամկետում որոշում կայացնել պատշաճ ձևով լրացրած ԲՆԱԴՕԹ հայտի վերաբերյալ: Եթե այս պարտավորությունը չի կատարվել, ապա մարզիկը կարող է դիմել ՀՀԳ: ԲՆԱԴՕԹ հայտի վերաբերյալ որոշման բացակայությունը կարելի է համարել Հայտի մերժում, ինչը տալիս է մարզիկին բողոքարկման իրավունք, ինչպես նախատեսված է Օրենսգրքի 4.4 հոդվածում:

## 11.0 ՀՀԳ-ի կողմից ԲՆԱԴՕԹ Մոնիտորինգ

Համաձայն Օրենսգրքի 4.4.6 հոդվածի , ՀՀԳ կարող է վերանայել ՄՖ-ի որոշումը

-եթե ՄՖ չի ճանաչել ՀԿ-ի կողմից տրամադրված ԲՆԱԴՕԹ-ը ՄՖ-ն պետք է տա բացատրություն, թե ինչու նա չի ճանաչել այդ ԲՆԱԴՕԹ-ը: ՀՀԳ կարող է վերանայել այդ

որոշումը և ուղարկել հետ ՄՖ-ին, եթե մերժումը պայմանավորված է հայտում բացակայող տեղեկություններով (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 8.4):

-ՀՀԳ-ն կարող է հաստատել ԲՆԱԴՕԹ մարզիկի ազգային Հկ-ի պահանջով եթե ՀԿ կարող է բացատրել, որ ՄՖ-ի մերժումը հիմնավորված չի ԲՆԱԴՕԹ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏԻ պահանջներով:

ՀՀԳ կարող է վերանայել ցանկացած ԲՆԱԴՕԹ որոշումները, ցանկացած ժամանակ, մարզիկի, ՀԿ-ի կամ ՄՖ-ի խնդրանքով ինչպես նաև իր սեփական նախաձեռնությամբ:

Եթե ԲՆԱԴՕԹ որոշումը համապատասխանում է ԲՆԱԴՕԹ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏԻ չափանիշներին, ՀՀԳ չի միջամտի գործըթացին իսկ եթե չի համապատասխանում ապա ՀՀԳ կվերանայի այն:
ԲՆԱԴՕԹ որոշումների վերանայում իրականացնում է ՀՀԳ ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովը, որը գործում է ԲՆԱԴՕԹ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏԻ հոդվածով 5.2-րդ պահանջներին համապատասխան:

## 11.1 ՀՀԳ–ի կողմից ԲՆԱԴՕԹ-ի վերլուծություն

ՀՀԳ-ում ԲՆԱԴՕԹ վերանայման գործընթացը սկսվում է մարզիկի, ՀԿ-ի կամ ՄՖ-ի խնդրանքով: ԲՆԱԴՕԹ վերանայման գործընթացը ՀՀԳ կողմից նույն է մարզիկի կամ ՀԿ-ների համար:

1. ԲՆԱԴՕԹ-ի վերանայման հարցումները պետք է գրավոր ներկայացվեն ՀՀԳ գրանցված փոստով վճարման փաստաթղթերի ուղեկցությամբ և ԲՆԱԴՕԹ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏԻ 6.2-րդ հոդվածում նշված բոլոր տեղեկությունները պարունակող փաստաթղթերով կամ նրանց պատճեններով, կամ մերժված ԲՆԱԴՕԹ-ի հայտերի դեպքում բոլոր այն տեղեկությունները, որոնք մարզիկը ներկայացրել է իր առաջին ԲՆԱԴՕԹ-ի հայտի հետ միասին (ԲՆԱԴՕԹ ՄՍ Հոդված 8.2):

2. ՀՀԳ ներկայցվող փաստաթղթերը պետք է պարունակեն բոլոր տեղեկությունները, որոնք ներկայացվել են առաջին անգամ ՀԿ (ամբողջական փաթեթ), ՀԿ-ի նախնական որոշման և ՀԿ կողմից, տրամադրված բացատրության հետ միասին (թե ինչու ԲՆԱԴՕԹ չի շնորհվել, կամ չի ճանաչվել):

3. Հայտը պետք է պատճենահանվի և ուղարկվի այն ՀԿ, որի որոշումը կլինի վերանայման առարկա և մարզիկին, նույնիսկ եթե նա չի պահանջել վերանայումը:

4. Երբ ՀՀԳ համաձայնվում է վերանայել գործը, պահանջվում է իրականացնել վճարում և վճարի վկայականը պետք է ներկայացվի ՀՀԳ: Այս վճարը չի վերադարձվում, անկախ վերանայման արդյունքից:

5. Վերանայման գործընթացը սկսվում է այն պահից երբ ՀՀԳ ստանում է վճարումը և գործին վերաբերվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

6. Հայտը ստանալուց հետո, ՀՀԳ սահմանում և համակարգում է ՀՀԳ ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովի աշխատանքը, որը պետք է վերանայի գործը և ընդունի իր որոշումը, 21 օրվա ընթացքում: Ապա ՀՀԳ-ը տեղեկացնում է բոլոր շահագրգռված կողմերին իր որոշման մասին:

7. Չնայած նրան, որ ՀՀԳ իրավունք ունի պահանջելու լրացուցիչ տեղեկատվություն, ՀՀԳ-ի ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովը ընդհանուր առմամբ վերանայում է ԲՆԱԴՕԹ-ի որոշումները ներկայացված բնօրինակ փաստաթղթերի և որոշման հիման վրա: Եթե լրացուցիչ բժշկական տեղեկատվությունը պետք է Հայտը համարըլելու համար, ԲՆԱԴՕԹ դիմումը պետք է կրկին ներկայացվի ՀԿ կամ ՄՖ:
Այն դեպքերում երբ ՀՀԳ որոշում է, որ նա պարտավոր չէ վերանայել Հայտը, ՀՀԳ-ն պետք է որքան հնարավոր է շուտ տեղեկացնի այդ մասին մարզիկին:
Եթե ՀՀԳ որոշում է չքննարկել ստացված հայտը, ապա ՀՀԳ-ն պետք է վերադարձնի մուծված վճարը մարզիկին:
ՀՀԳ-ի ցանկացած որոշում վերջնական է և բողոքարկման ենթակա չէ: Սակայն, ՀԿ-ի կամ ՄՖ-ի բնօրինակ որոշումը կարող է բողոքարկվել, ինչպես սահմանված է Օրենսգրքի 4.4.7 (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 8.3- րդ):
Ներքոնշված դեպքում ՀՀԳ-ն կարող է վերադարձնել բոլոր փաստաթղթերը ՀԿ-ին կամ ՄՖ-ին՝

ա. Պարզաբանումների համար, օրինակ՝ եթե ԲՆԱԴՕԹ-ի ստանալու պատճառները հստակ չեն սահմանված:
բ. Լրացուցիչ վերանայման համար, օրինակ՝ եթե կա ԲՆԱԴՕԹ-ի մերժում, քանի որ բացակայում է անհրաժեշտ բժշկական տեղեկատվությունը, ինչի մասին ասված է ԲՆԱԴՕԹ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏԻ հոդվածով 4.1-ում:

ՀՀԳ-ի ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովը կարող է ստանալ այլ բժշկական կամ գիտական փորձագետների աջակցություն եթե գտնում է նպատակահարմար (ԲՆԱԴՕԹ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏԻ հոդված 8.5):
ՀՀԳ-ի ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովը պարտավոր է չեղյալ համարել ցանկացած հայտի մերժումը, եթե ԲՆԱԴՕԹ հայտը համապատասխանում է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏԻ Հոդված 4.1-րդ պայմաններին, այսինքն այն պետք է շնորհիի մարզիկին ԲՆԱԴՕԹ (ԲՆԱԴՕԹ ՄՍ հոդված 8.7): Եթե ՀՀԳ ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովը իր նախաձեռնությամբ փոխում է ՀԿ-ի որոշումը հակադարձին է, կամ ընդունում է նոր որոշում: ՀՀԳ կարող է պահանջել ՀԿ-ից, որը կատարել է նախնական որոշում, վճարել ՀՀԳ ծախսերը այդ վերանայման համար (ԲՆԱԴՕԹ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏԻ հոդված 8.9- րդ):

### 11.2 ԲՆԱԴՕԹ –ի կարգավիճակը ՀՀԳ վերանայման ընթացքում

Եթե ՀՀԳ ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովը չեղյալ է համարում նախնական որոշումը և շնորհում է ԲՆԱԴՕԹ, ապա մարզիկը կարող է սկսել օգտագործել արգելված նյութը կամ մեթոդը, ըստ ՀՀԳ ԲՆԱԴՕԹ-ի: Այդ ԲՆԱԴՕԹ-ը ուժի մեջ կլինի ինչպես ազգային այնպես էլ միջազգային մակարդակի մրցումների ժամանակ: Հակառակ, եթե ՀՀԳ ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովը մերժել է մարզիկի հայտը, ապա ՀՀԳ որոշումը կլինի անվավեր բոլոր մակարդակների մրցումների ժամանակ (Օրենսգրքի 4.4.3 հոդված):
ՀԿ-ն, որը կայացրել էր նախնական որոշումը, իրավունք ունի բողոքարկելու ՀՀԳ-ի որոշումը ՄԱԴ-ում: Քանի դեռ ՄԱԴ-ը քննարկում է ՀԿ-ի բողոքը, ՀՀԳ որոշումը մնում է ուժի մեջ, քանի դեռ ՄԱԴ-ը չի կայացրել վերջնական վճիռը:

### 11.3 ՀՀԳ որոշումների բողոքարկումը

Եթե ՀՀԳ ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովը չեղյալ է համարում նախնական որոշումը, միայն մարզիկ կամ ՀԿ կարող է բողոքարկել այս որոշումը ՄԱԴ-ում:

Եթե նախնական որոշումը ԲՆԱԴՕԹ մերժելու վերաբերյալ ՀՀԳ ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովը անվավեր է ճանաչել, ապա այդ որոշումը կարող է բողոքարկվել.

- միջազգային մակարդակի մարզիկը կարող է բողոքարկել ՄԱԴ-ում
- ազգային մակարդակի մարզիկը՝ ազգային բողոքարկման մարմնում: Եթե ազգային բողոքարկման մարմինը անվավեր է ճանաչում ՀՀԳ ԲՆԱԴՕԹ Հանձնաժողովի որոշումը, ՀՀԳ կարող է բողոքարկել նման որոշումը ՄԱԴ-ում:

## 12.0 ԲՆԱԴՕԹ –ի ղեկավարումը ԱԴԱՄՍ-ի միջոցով

ԱԴԱՄՍ-ը համակարգչային համակարգ է, որը մշակված է Օրենսգրքի պահանջներին խիստ համապատասխան իր շահառուների և ՀՀԳ իրենց հակադոպինգային գործնեությունը իրականացնելու համար:
Որպես դոպինգ ստուգման արդյունքների կենտրոնական համալիր և դրանց կառավարման համար ԱԴԱՄՍ-ը թույլ է տալիս տվյալների և հաշվետվությունների մուտքագրում, փոխանակում և պահպանում անվտանգ միջավայրում:
ԱԴԱՄՍ-ով ԲՆԱԴՕԹ կառավարման մոդուլը մատուցում է ԲՆԱԴՕԹ-ի դիմումների ներկայացում հետևյալ անձաց կողմից հետևյալ ծառայությունները՝
- Մարզիկների;
- Մարզիկի բժիշկների;
- ՀԿ-ի ԲՆԱԴՕԹ Հանձնաժողով ամդամների.
ԱԴԱՄՍ-ի միջոցով կառավարվում է
- մարզիկներին ծանուցումը ուղարկելը
- ԲՆԱԴՕԹ-ի հայտը մերժելու մասին ծանուցում ուղարկելը
- մարզիկներին ԲՆԱԴՕԹ Թույլտվություն ուղարկելը
- ԲՆԱԴՕԹ-ի գործող ժամկետի կամ դրանում կատարված փոփոխությունների մասին տեղեկություններին ծանոթանալը
- ԲՆԱԴՕԹ վերաբերվող տեղեկությունների փոխանակումը
- ՄՖ կորղմից ԲՆԱԴՕԹ-ի ճանաչումը եթե այն շնորհվել է ԱՀԿ-ի կողմից:

### 12.1 ԱԴԱՄՍ-ը և մարզիկները
ԱԴԱՄՍ-ը հնարավորություն է տալիս մարզիկներին լրացնել ԲՆԱԴՕԹ-ի հայտերը և ներկայացնել իրենց ԲՆԱԴՕԹ-ի հայտեր օնլայն, ստանալ ՀԿ-ից օնլայն ծանուցում և ստանալ տեղեկություններ իրենց դիմումների կարգավիճակի մասին:

### 12.2 ԱԴԱՄՍ-ը և բժիշկները
Մարզիկների բժիշկները կարող են լրացնել ԲՆԱԴՕԹ-ի հայտերը օնլայն:

### 12.3 ԱԴԱՄՍ-ը և ՀԿ
ԱԴԱՄՍ-ը հնարավորություն է տալիս ՀԿ-ներին կառավարել ԲՆԱԴՕԹ հայտերը օնլայն: ՀԿ կարող է շնորհել կամ մերժել ԲՆԱԴՕԹ-ի հայտերը օնլայն, ուղարկել մարզիկներին ծանուցում և հաստատել, թե արդյոք ԲՆԱԴՕԹ վերանայվում է ՀՀԳ-ի կողմից թե ոչ:
ՀԿ կարող է նաև ծանոթանալ և ճանաչել այլ ՀԿ-ի կողմից տրված ԲՆԱԴՕԹ:

# 13.0 ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*ADAMS (ADAMS - Anti-Doping Administration and Management System)*: Հակադոպինգային տվյարների կարավարման համակարգ, որը նախատեսված է համացանցում տեղավորված հակադոպինգային ոլորթի վերաբերյալ բոլոր տվյալների կարավարման համար՝ ներառյալ տվյալների ներմուծումը, պահպանումը, տարածումը և հաշվետվությունների ձևակերպումը: Համակարգը մշակված է ՀՀԳ-ին և այլ շահագրգիր կազմակերպություններին իրենց հակադոպինգային գործունեությունում օրենսդրությունը պաշտպանելու և հակադոպինգային ոլրթին վերաբերվող տվյալները գախտնի պահպանելու նպատակով:

